կ՝արշաւէին երկրի խորքերը, շատ անգամ հասնելով մինչեւ Դայնաւար[1] քաղաքը։ Կաւատ[2], որդի Պերոզ արքայի, ուղարկեց նոցա դէմ իւր անուանի զօրապետներից մէկին 12.000 զօրքով, որ ասպատակեց Աղուանք եւ նուաճեց Արաբս[3] կոչուած գետից մինչեւ Շաբուան[4]։ Կաւատ, միանալով նորա հետ, շինեց Աղուանից երկրում Փայտակարան[5] եւ Պարտաւ քաղաքները, վերջինս ամբողջ սահմանագլխի համար, իսկ Կաբալայ[6] խաղարների դէմ։ Շաբուան երկրի եւ Ալանաց Դրան[7] մէջ շինեց

---

1 Ասրպատականում։

2 Անուշիրուանի հայրը, 488—531 թ.։

3 Արաբական الرس (Արրաս) ձեւը մեր ժողովրդական Արաղ-ին կը մօտենայ։ Բառիս առաջին վանկը արաբացիք ال որոշիչ մասնիկի տեղ են ընդունած, ինչպէս այլ դէպքերում եւս։ Յուն. Ἀράξης.

4 Տես յՈւտի. Շաբուան անուամբ աղգ կը յիշէ Խորենացին (Աշխարհագր.) ի Սարմատիա։ Յիշէ եւ Istaxri ի Թիւս Կովկասի լեռնարնակ ցեղերի։

5 البَيْلَقَان (Բայլաքան) անփոփոխ արաբացի մատենագրերի մօտ. մեր Փայտակարանն է։

6 قَبَلَة = Χαβάλα (Ptolom. Geogr.) Cabalaca (Plin. 6, 29). է կապազակ քաղաք Աղուանից, այժմ Քաբալէ գիւղ (տես Հ. Ալիշանի "Տեղագիր Հայոց Մեծաց„, 91)։

7 باب الان = Դուռն Ալանաց, Կովկասից դէպի Փոքր Ասիա տանող երկու յայտնի լեռնային անցքերից մէկն է, որոնք յաճախ չփոթած են գիտնականներն, ի Թիւս նոցա Kiepert (Lehrbuch der alten Geographie) եւ Մ. Էմին (Մ. խոր. ռուս. թրգմ.). այժմ Դարբէալ կոչուած կիրճն է. միւս անցքը մեր հնոց Պահակ ճորայ կամ Դերբենդ է։ Ալանք առաջին անգամ հանդէս են գալիս պատմութեան մէջ Ա. դ. Վեսպասիանոս կայսեր (70—79) ժամանակ, ինչպէս կ՝աւանդէ Joseph Flav. (B. VII, 7. 4)։ "Այս ժամանակ Ալանք (οἱ Ἀλανοί), որոնք սկիւթացի ազգ են եւ Տանաիս (Դոն) գետի եւ Մէոտ (Ազով) ծովակի մօտերքը կը բնակին, դիտաւորելով արշաւել